

ՆԱԳՈՐԱՆՈՒՄՆԵՐ

ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ

բանասիրական գիյր. թեկնածու, ԼԻ

ԿԱԽԱՐԴ-ՀՄԱՅՔ-ՋԱՏՈՒԿ-ՎՀՈՒԿ ՀԱՄԱՆԻՀԱՅԻՆ ՀԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Կախարդ-հմայր-ցարուկ-փուկ համանիշային շարքում առկա են իմաստաբանական տարբերություններ, որոնք հիմնականում հասկացական են, այն է՝ դրանք արտահայտում են միեւնոյն առարկան, երեւոյթը, հատկանիշը ցույց տվող հոմանիշների ներքին, հասկացական տարբեր հիմունքները կամ տեսանկյունները¹:

Դիտարկենք այդ բառերը:

Հմայ(ք) (միջ. պարսկ. humay-. հմմտ. ավեստ. humaya «օրհնեալ», սանսկրիտ su-maya «հրաշալի զօրութիւն, հնարագիտութիւն, խորամանկութիւն», պարսկերէն humayun «բախտաւոր, երջանիկ», humay «բախտի թռչուն», որոնց բոլորի արմատն է mayā՝ «օրհնութիւն, երջանկութիւն» (ՀԱԲ, 3, 103, ՀՄԲ³, 463): Հմայք բառն անեղական է:

Հին հայերենում «Հմայքն» ունեն «սուտ գուշակութիւն, ըղձութիւն, ըղձապատումն լինել» իմաստները (ՆՀԲ⁴, 2, 102): Աստվածաշնչում վկայված են հմայել եւ հմայք բառերը, երկուսն էլ՝ հինկտակարանյան: Հմայք-ը հիմնականում թարգմանվել է «կախարդութիւն»՝ «զի հմայք մեղք են...»՝ «Կախարդութիւն անելը մեղք է...» (Ա. Թագ. ԺԵ. 23), «...զի ոչ գոն հմայք ի Յակոբ...»՝ «Յակոբի յետնորդների մէջ կախարդութիւն անող չկայ» (Թիւք ԻԳ. 23, Աստուածաշնչունչ, 1999) եւ այլն:

¹ Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բանագիտություն, Երևան, 1984, էջ 70:

² Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան (այստիւտնա՝ ՀԱԲ), հ. 1-4, Երևան, 1971-1979:

³ Գ. Զաւուկյան, Հայերէն ստուգաբանական բառարան (այստիւտնա՝ ՀՄԲ³), Երևան, 2010:

⁴ ՆՀԲ, Վենետիկ, 1836-1837:

Գրաբարում հմայ բաղադրիչով են կազմված հմայական, հմայահաս, հմայնակ «կախարդական թղթեր», հմայկ, հմայահասանություն «Հմայությանը հավանելը կամ հավատալը», գաղազանահմայություն, դիւսահմայություն, լերդահմայ, կիսահմայ, հասահմայ, հասահմայություն եւ այլն: Այս բառաշղթայում նկատելի են բառերի գործածություն, ժամանակագրության առանձնահատկություններ: Այսպես, վերոգրյալ բառերից Ս. Գրքում վկայված են լերդահմայ լինել (մեկ անգամ)՝ «Հմայս Հմայել, գաղազանս ընկենու... լերդահմայ լինել» (Եզեկ. ԻԱ. 21), հասահմայ (մեկ անգամ)՝ «Եւ դուք մի՛ լսէք... երազոց եւ կիւսից ձերոց եւ հասահմայից ձերոց եւ կախարդաց ձերոց» (Երեմ. ԻԷ. 9):

Վերոգրյալ հատվածում կախարդ բառին հոմանիշ է կիւս-ը, որով էլ կազմված է կիսահմայ բառը՝ «դու եւ մերձաւորք քո, որ նստինդ առաջի քո. զի արք կիսահմայք են, զի ահաւասիկ ես ամեմ զծառայ իմ» (Զաք. Գ. 8)՝ «...որ նստած են քո առաջ, քանզի նրանք գիտակ, կանխարես մարդիկ են» (Աստուածաշունչ, 1999), ռուսերեն՝ «...сидящие перед тобою мужи знаменательные»:

ՆՀԲ-ն կիւս-ը մեկնում է. «Հմայող, կախարդ. եւ հմայք, կախարդութիւն, որ եւ Վհուկ», կիսակերպող՝ «կախարդ, որ կերտէ կիւսս կամ հմայս» (ՆՀԲ, 1, 1101): Եզակի վկայություն է Գ. Մագիստրոսից: Երբեմն կիւս-ը շփոթվել է կիւս բառի հետ՝ կիսահմայություն (ՀԱԲ, 2, 598): ՀԱԲ-ում բառն ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում բառի իրանական ծագումը (Թերեւս Հ.-ե. *keu- «ուշադրություն դարձնել, նկատել, լսել» արմատից) (ՀՍԲ, 408):

Հմայով կազմված գաղազանահմայություն, դիւսահմայություն բառերը եզակի վկայություններ են հետհինգերորդ դարյան շրջանից:

Ղ. Ալիշանը հմայք-ը բացատրում է. «...հմայք կամ հմայություն բառի հատուկ նշանակությունը սնոտի ջանքերն ու գործերն են՝ իմանալու իբր կրոնական սկզբով մի բան, մանավանդ շատերի չգիտեցածը»⁵:

Հմայությունը ավելի ընդհանուր է, եւ սրա զանազան տեսակները անվանվում են՝ հմայ բառին ավելացնելով որեւէ այլ բառ՝ լերդահմայություն (զոհաբերված կենդանու լյարդը զննելը եւ գուշակություններ անելը), հալահմայություն (թռչունների թռիչքով եւ ձայներով գուշակություններ անելը - սա կոչվում է նաեւ հալահարցություն կամ հալաթոյից), ջրահմայություն, օրահմայք (շաբաթվա օրերից չորեքշաբթին կամ շաբաթը չար համարելը), լուսահմայ եւ այլն: Հմայությունների տարբեր տեսակների

⁵ Ղ. Ալիշան, Հայոց հին հավատք կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 184:

մասին հիշատակում է Հ. Մանգակունին (ճառ ԻԶ.): Նա խստորեն դատապարտում է դրանք եւ համարում քրիստոնյային անհարիր գործեր:

Օրինակներ մեր մատենագրությունից. «Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս... առնու զամուրն Անի, եւ գերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլ եւ զոսկերս թագաւորացն. ոչ գիտեմ, թէ վասն նախատի՞նսն առնելոյ Արշակայ, եթէ վասն հմայից ինչ հեթանոսականաց»⁶: «Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ, որ յԱրմաւիր. զորոց զսաղարթուցն սօսաւիւն, ըստ հանդարտ եւ կամ սաստիկ շնչելոյ օդոյն, եւ թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց, եւ այս ցբազում ժամանակս»⁷: «Յաղագս թէ որպէս դարձեալ զգիւթսն եւ զքաւդեայսն եւ զկախարդսն հարցեալ Շապհոյ հմայիսը՝ փորձէր զմիտսն Արշակայ»⁸:

Հմայությունը հատուկ է եղել հեթանոսությունը, սակայն, ինչպես գրում է Ալիշանը, «...այսպիսի աղճատանքն ու ստույգությունները Հայերի մեջ մտել են ոչ որպէս օտարների դիք ու կուռք, այլ շատը իրենց հնարածն է, եւ օտարներից էլ վկայված են Հայկական Հմայությունները: Եւ չարագուշն է, որ մեծ եռանդով ու համառությամբ են պահված, թեեւ մեր շատ Հայեր ու վարդապետներ հակառակվել ու մեղադրել են՝ սկսած Լուսավորչից, Եզնիկից, Խորենացուց ու Մանգակունուց... Եւ ավելի ցավալի է ասելը, որ անջնջելի են թվում»⁹:

Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում»¹⁰ վկայված են հմայանայ՝ «տեսիլքով հայտնվել», հմայութիւն՝ «հավատո հանգանակ», հմայար «չարքերով հմայող» բառերը:

Հետագայում հմայ(ը) բառը իր առաջնային, կրոնական «1. Հմայություն: 2. Հմայված իր, հմայակ» իմաստներից զատ ձեռք է բերել նոր, փոխաբերական իմաստ՝ «հոգեկան կամ ֆիզիկական գերող հատկություն, հրապույր» (ԱՀԲԲ¹, 876, ԺՀԼԲԲ², 3, 356). կազմվել են նոր բառեր՝ հմայարեր, հմայիչ, հմայություն, հմայրուր եւ այլն:

⁶ Մովսիսի Խորենացու Պատմություն հայոց, Տիֆլիս, 1913, էջ 288:

⁷ Նույն տեղում, էջ 64:

⁸ Փաստոսի Բուզանդացու Պատմություն հայոց, Ա. Պետերբուրգ, 1883, էջ 54:

⁹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 184:

¹⁰ Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, էջ 171:

¹¹ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Երևան, 1976:

¹² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1-4, Երևան, 1969-1981:

Կախարդ: Իրանական փոխառություն. հմմտ. ավեստ. *kaxvarōda- «կախարդ». պարսկերեն ձևը ավանդված է (ՀԱԲ, 2, 486-487, ՀՍԲ, 373): Հին Հայերենում ունեն «գիւթ, կիւս, վհուկ, մոգ. սուտ եւ խարդախ մարգարէ. դեղատու. թովիչ. խաբօղ լսելեաց եւ աչաց դիւական գործակցութեամբ» իմաստները (ՆՀԲ, 1, 1034): Ս. Գրքում կա 10 վկայություն:

Օրինակ՝ «եւ դուք մի՛ լսէք մարգարէից ձերոց եւ ըզձութեանց ձերոց եւ երազոց ձերոց եւ կիւսից ձերոց եւ հաւահմայից ձերոց եւ կախարդաց ձերոց...» (Երեմ. ԻԷ. 9), «եւ ծուլացն եւ անհաւատից, եւ սպանողաց եւ պոռնկաց եւ կախարդաց եւ կռապաշտից եւ դեղատուաց եւ ամենայն ստոց ամպարշտաց...» (Յայտ. ԻԱ. 87):

Կախարդ-ով վկայված են կախարդարար, կախարդագիրություն, կախարդական, կախարդանք, կախարդասար, կախարդեմ, կախարդություն (ՆՀԲ) բառերը:

ՀԲԲ-ում¹³ ավելացված են կախարդիչ, կախարդակից «կախարդի ընկեր», կախարդուի բառերը: Թերեւս պետք է ենթադրել, որ կախարդուի բառը ավելի հնից է գալիս. հիշենք մեր հեքիաթները, որոնցում հատկապես կանայք են կախարդությունը զբաղվողները (հայկական հեքիաթներում կախարդուհիները խնոցու վրա նստած թռչում էին, այդտեղից էլ՝ ձնու՛մ հեծնո՛ղ պատա՛լ արտահայտությունը):

Կախարդեմ բայը, «կախարդանքի ենթարկել» իմաստից բացի, ունեն «հրապուրել, դիւթել» իմաստները՝ «Կախարդ. զնա ձայնիւ տասնադեացն» (ՆՀԲ): Ժամանակակից Հայերենում նույնպես այդ իմաստը գիտակցվում է:

Ըստ ժողովրդական սնահավատություն՝ կախարդը կապ ունի չար ուժերի հետ, որոնց օգնությամբ էլ կատարում է չար գործեր կամ մարդկային ուժից վեր բաներ: Կախարդ բառը նմանություն ունի «հնարագետ, թովիչ, ճարպիկ» իմաստները: Երբեմն էլ գործածում են «գլուխը կախ գցած» իմաստի համար՝ «Ի՞նչ ես նստել կախարդ-կախարդ» (ՀԲԲ, 2, 367): Ինչպես տեսնում ենք, կախարդ բառը ձեռք է բերել նոր իմաստներ. տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում:

Կախարդասար բառը, ըստ Աճառյանի, «կախարդ, կախարդական» իմաստով ամբողջական փոխառություն է (ՀԱԲ, 2, 487): Զահուկյանը բացատրում է «կախարդների գլուխ, կախարդապետ». հմմտ. ավեստ. Kaxvarōda- (հայ. կախարդ) եւ ավեստ. sarah-, միջ. պրսկ. sar «գլուխ»¹⁴:

¹³ Ս. Մայիսյան, Հայերեն քաղաքական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Երևան, 1944-1945:

¹⁴ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 527:

Աստվածաշնչում կախարդասար բառը վկայված է մեկ անգամ. «Եւ բազումք ի կախարդասարացն բերէին զգիրս, այրէին առաջի ամենեցուն» (Գործք. ԺԹ. 19), աշխարհաբար՝ «Եւ կախարդութեամբ զբաղվողներից շատերը բերում էին իրենց գրքերը եւ բոլորի առաջ այրում» (Աստուածաշունչ, 1999), ռուսերեն՝ «А из занимавшихся чародейством довольно много, собравши книги свои, сожгли перед всеми», (Исая. 19, 19, Библия. 1998): Ինչպես երեւում է վերոբերյալ օրինակներից, ռուսերենում եւ աշխարհաբարում «կախարդապետ» իմաստը չի զգացվում: Այդպես է նաեւ մեր մատենագիրների երկերում՝ «Տեսէք ասէ զկախարդասար աղանդ ազգիդ քրիստոնէից»¹⁵, «Լուեալ է մեր զամենայն գործս եւ զկախարդասար վարդապետութիւն դորա»¹⁶:

Ըստ Լ.Հովհաննիսյանի՝ բառի երկրորդ բաղադրիչը իրանյան *sar* «գլուխ» բառը չէ, այլ հ.-ե. *k'ər-ը՝ հայ. սար(ք), սար(կ) բառն է, այսինքն՝ բառը կունենա «կախարդություն սարքող, կախարդություն անող» իմաստը¹⁷, որն էլ երեւում է վերոհիշյալ օրինակներում:

Ջատուկ (միջ. պարսկ. *jatuk*՝ «կախարդ, վհուկ»։ Համեմատաբար նոր ձեւեր են պրսկ. *jadu*, որից էլ քրդ. *jadu* եւ թրք. *jado* «չար պառավ») (ՀԱԲ, 4, 124, ՀՍԲ, 651)՝ «կախարդ, դիւթ, վհուկ, խաբեպատիր (այլ կամ կին)» (ՆՀԲ, 2, 671), «կիւս, խաբեբայ՝ կախարդի պէս, եւ կախարդ»¹⁸:

Օրինակ՝ «...դու այնպիսւոյ անյարիր ցարուկ Մահու ծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար»¹⁹:

ՆՀԲ-ն ցարուկ-ից կազմված բառեր չի վկայում:

ՀԲԲ-ում բառն ունի երկրորդ իմաստ՝ «կախարդանք, կախարդելու գործը» (Հմմտ. Նրան ցարու կն արկ (ՀԲԲ, 4, 136), ԱՀԲԲ-ում եւ ԺՀԲԲ-ում ցարուկ գլխաբառի բացատրությունը հղված է ցաղու գլխաբառին՝ «կախարդ, կախարդություն, փխբ. չար, ճիվաղաբարո կին» (ԱՀԲԲ, 1235), 1. բրբ. «կախարդ», 2. փխբ. «կախարդանման, չար» (ԺՀԲԲ, 4, 224):

Բառը ժողովրդախոսակցական լեզվում եւ բարբառներում ցաղու տարբերակով է, Կարնո բարբառում՝ ցաղի դատն «կախարդ կին»: Բարբառներում այս արմատով հանդիպում են ցաղուրազ (Չաղոբազ, Չատուպազ, Չատրպազ)՝ «կախարդ, վհուկ», ցաղուրագություն (Չաղոբազություն)՝ «կախարդություն», ցաղուխանայ՝ «խորամանկանալ» (Ղարաբազի բրբ.), ցաղուրար, ցաղուրյար (Չատուբար)՝ «1. կախարդ, վհուկ, 2. հրապուրող,

¹⁵ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տիփիս, 1909, էջ 109:

¹⁶ Հազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց, Տիփիս, 1904, էջ 81:

¹⁷ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 226:

¹⁸ Առնետն րաւարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 704:

¹⁹ Գ. Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Պոլիսոս Այրլս, 1948, էջ 144:

թողիչ կին, 3. անզգամ, կապը կտրած կին» բառերը²⁰: Ժողովրդախոսակցական լեզվում ունի վիրավորական, անարգական երանգ:

Վհուկ - Բառն ստուգաբանված չէ: Զահուկյանը հավանական է համարում փոխառություն իրանական աղբյուրից²¹: Բաղադրություններ՝ փկկահարցուկ, փկկուրթին: ՆՀԲ-ն մեկնում է. «Կախարդ՝ այր կամ կին. հարցուկ. հմայող, որովայնակոչ» (ՆՀԲ, 2, 827): ՀԲԲ-ում վկայված է նաեւ փկկուրի բառը՝ «կին վհուկ» (ՀԲԲ, 4, 348): Աստվածաշնչում ունի 17 վկայություն: Օրինակ՝ «Զհետ վհկաց մի երթայցէք» (Ղեւտ. ԺԹ. 31, «...վհուկ եւ նշանագէտ լինիցի առ ի զմեռեալս հարցանելոյ...» (Բ. Օր. ԺԸ. 11):

Ժամանակակից հայերենում բառն ունեցել է բառիմաստի ընդլայնում. ձեռք է բերել նոր իմաստներ՝ փոխաբերաբար՝ «Ծայրահեղորեն չար՝ հրեշավոր մարդ (առավելապես՝ կանանց մասին)» (ԱՀԲԲ, 1395): Բաղադրվել են նոր բառեր՝ փոխկանխած, փոխկորդի: Ընդ որում, փոխկորդի-ն իր հիմնական իմաստին զուգահեռ ունի փոխաբերական գործածություն՝ «վհուկի ծնունդ, չարի մարմնացում» (ն.տ.):

ՀԼԲԲ-ում բառն արձանագրված չէ:

Կախարդ-հմայր-ջարուկ-վհուկ համանիշային շարքում հիմնաբառը կախարդ-ն է: Կախարդ-ով ժամանակակից հայերենում կազմված է 30, հմայր-ով՝ 22, ջարուկ-ով՝ 4, վհուկ-ով՝ 3 բառ (ԱՀԲԲ):

РЕЗЮМЕ

В синонимическом ряду *kaxard* - *hmayk* - *fatuk* - *vhuk* есть семасиологические различия. Эти слова, заимствованные из среднеперсидского языка, вошли в лексический состав армянского языка и употребляются в разных стилях. Слово *fatuk*/*jadu* обычно употребляется в диалектах и народно-разговорной речи. В синонимическом ряду *kaxard* - *hmayk* - *fatuk* - *vhuk* слово-основа *kaxard*. От корня *kaxard* в современном армянском языке образованы 30, *hmayk* - 22, *fatuk* - 4, *vhuk* - 3 слова.

SUMMARY

There are semantic differences in the synonymic series of *kaxard* - *hmayk* - *fatuk* - *vhuk*. These words are loans from the Middle Iranian language. They were assimilated to Armenian vocabulary and are applicable in different styles. The word *fatuk*/*jadu* (sorceress) is frequently used in dialects and colloquial language. In the synonymic series of *kaxard* - *hmayk* - *fatuk* - *vhuk* the keyword is *kaxard* (witch). In Modern Armenian there are 30 words formed on the root of *kaxard*, 22 - of *hmayk*, 4 - of *fatuk*, 3 - of *vhuk*.

²⁰ Հայոց լեզվի քաղաքային բառարան, հ. Ե, Երևան, 2005, էջ 144-145:

²¹ Տե՛ս ՀԱԲ, էջ 713: